

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԱԶ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԵՆԱԿԵՏ (ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

Միսակ Մարկոսյան

*«ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ»*

Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ընթացքում իրավաստեղծի կամքը նորմատիվ իրավական ակտում արտացոլվում է տեքստի միջոցով: Այլ կերպ իրավաստեղծի կամքը և նորմատիվ իրավական ակտի տեքստը հարաբերակցվում են որպես բովանդակություն և ձև¹: Իրավաստեղծի կամքի փոխակերպումը տեքստային սիմվոլների (տառերի, կետադրական նշանների, թվերի) «կողավորման» գործընթաց է, որի ընթացքում իրավաստեղծի գաղափարները ստանում են իրավաբանական ձևական տեսք: Իր հերթին դա օբյեկտիվորեն հանգեցնում է այդ գաղափարների որոշակի խեղաթյուրմանը:

Իրավական նորմերի իրացման համար առաջանում է հակառակ գործընթացի՝ «ապակողավորման» անհրաժեշտությունը, որի ընթացքում իրավակիրառողը պետք է ձևի (օրենքի տառի) հիման վրա վերծանի բովանդակությունը (իրավաստեղծի կամքը), այսինքն՝ մեկնաբանի իրավունքը:

Իրավունքի մեկնաբանման նշանակությունը, սակայն, չի սահմանափակվում միայն նորմատիվ իրավական ակտի տեքստի «ապակողավորման» անհրաժեշտությամբ: Իրավաբանական տեքստերը բովանդակում են հատուկ տերմինաբանություն, որը հաճախ միանշանակ չի ընկալվում, զնահատողական հասկացություններ, որոնք անհրաժեշտ է կոնկրետացնել կոնկրետ դեպքի վերաբերությամբ, երկիմաստ կամ բազմիմաստ բառեր և արտահայտություններ, որոնք հետևանք են իրավաստեղծման գործընթացում օրենսդրական տեխնիկայի կանոնների ոչ ճիշտ կիրառության: Բացի այդ, իրավական նորմերը սկզբունքորեն փոխկապակցված են և կիրառվում են համակարգային ձևով, ինչը պահանջում է բացահայտել կիրառվող նորմերի միջև առկա բովանդակային կապերը: Այդ ամենը պայմանավորում է նորմատիվ իրավական ակտի տեքստի իրական բովանդակության և իմաստի բացահայտմանն ուղղված մտավոր գործունեության՝ իրավունքի մեկնաբանման անհրաժեշտությունը:

Իրավունքի ճիշտ մեկնաբանումը նպաստում է իրավաբանական պրակտիկայի միատեսակության և կայունության, կոնկրետ իրավական վեճերի արդարացի լուծման ապահովմանը: Ըստ այդմ, իրավունքի սխալ մեկնաբանումը խոչընդոտում է իրավաստեղծի իրական կամքի իրագործումը, խեղաթյուրում է իրավունքի իրացման արդյունքը: Պատահական չէ, որ օրենքի սխալ մեկնաբանումը օրենսդրությամբ դիտարկվում է որպես դատական սխալի տարատեսակ և դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմք²:

¹ Տե՛ս **Суслов В.А.** Герменевтика права // Правоведение, 2001, №5, էջ 7:

² Տե՛ս 1998թ. հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածը, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը:

Ելնելով իրավունքի մեկնաբանման չափազանց կարևոր նշանակությունից՝ պետությունը օրենքի մակարդակով է սահմանել իրավունքի մեկնաբանման «խաղի կանոնները»: Այսպես, 2002 թվականի ապրիլի 3-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածը նվիրված էր իրավական ակտի մեկնաբանմանը: Այն սահմանում էր իրավական ակտի մեկնաբանման չափանիշների (եղանակների, միջոցների) բավականին սահմանափակ շրջանակ: Այսպես, հոդվածի 1-ին մասում ամրագրված էր. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»: Հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները: Հոդվածի 3-րդ մասում նշվում էր, որ իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար:

Իրավունքի մեկնաբանման «խաղի կանոնների» օրենսդրական սահմանման հարցում առաջընթաց քայլ պետք է համարել 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածում («Նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանումը») մեկնաբանման չափանիշների շրջանակի ընդլայնումը: Նշված հոդվածը սահմանում է. «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Մեր կարծիքով, մեջբերված հոդվածի բովանդակությունն առաջադիմական պետք է համարել հետևյալ երեք պատճառներով:

1. Հոդվածում հատուկ ընդգծվել է, որ իրավական նորմերը մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը: Նման օրենսդրական պահանջը մեկնաբանողի համար ազդակ է այն մասին, որ նա չպետք է անվերապահորեն ենթարկվի օրենքի տառին, այլ պետք է կոնկրետ դեպքի կապակցությամբ կատարի իրավական նորմի տեքստի «ապակողավորում»՝ իրավաստեղծի իրական կամքը բացահայտելու նպատակով: Այլ կերպ ասած՝ մեկնաբանողը չպետք է առաջնորդվի «օրենքի ոգու» և «օրենքի տառի» նույնության կանխավարկածով, նա պետք է նաև չբացառի, որ տվյալ կոնկրետ դեպքում իրավական նորմի տեքստը կարող է ամբողջությամբ և ձգճրիտ չարտացոլել այն նպատակը, որն իրավաստեղծը նկատի է ունեցել տվյալ նորմը սահմանելիս:

2. Հոդվածում ընդլայնվել է այն ելակետերի շրջանակը, որոնց հիման վրա մեկնաբանողը կարող է բացահայտել իրավաստեղծի իրական կամքը: Այսպես, քննակրվող հոդվածը ամրագրում է իրավական նորմը մեկնաբանելու հետևյալ չորս ելակետերը՝

- ա) իրավական նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը,
- բ) ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստը,
- գ) այն նորմատիվ իրավական ակտի դրույթները, ի կատարումն որի ընդունվել

է այդ ակտը,

դ) տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքները, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքները:

Ինչպես տեսնում ենք, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի համեմատությամբ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածում նախատեսվել է մեկնաբանման երկու նոր ելակետ՝ իրավական կարգավորման համատեքստը և իրավունքի սկզբունքները:

3. Հոդվածում չի նախատեսվել մեկնաբանման նպատակով իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը օգտագործելու սահմանափակումը: Այդ սահմանափակման վերացումը սերտորեն կապված է իրավական կարգավորման համատեքստը որպես մեկնաբանման ելակետ նախատեսելու հետ, ինչի մասին կխոսենք ստորև:

Ստորև կքննարկենք այն հարցը, թե ինչպես կարող է իրավական կարգավորման համատեքստը ծառայել որպես իրավական նորմի մեկնաբանման ելակետ, և կներկայացնենք համատեքստի հիման վրա քրեաիրավական նորմերի մեկնաբանման կոնկրետ օրինակներ:

Նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է իրենից ներկայացնում իրավական կարգավորման համատեքստը, և ինչ հարաբերակցության մեջ են «տեքստ» և «համատեքստ» հասկացությունները:

Տեքստը և համատեքստը հերմենևտիկայի ուսումնասիրության առարկան են: Ամենաընդհանուր ձևակերպմամբ՝ հերմենևտիկան գիտություն է տեքստերը հասկանալու և մեկնաբանելու մասին¹:

Հերմենևտիկայում տեքստը բնորոշվում է որպես կոնկրետ սահմաններ ունեցող, փոխկապակցված տարրերից բաղկացած առարկայական տիրույթ, որը հնարավոր է ընկալել և դրանից բխեցնել իմաստ²: Տեքստի այս բնորոշմանը համապատասխանում են ինչպես կրոնական, ստեղծագործական, գրական, այնպես էլ իրավաբանական տեքստերը: Օրինակ՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր.օր.) 191-րդ հոդվածի («Մարդուն առևանգելը») 1-ին մասը շարադրված է հետևյալ կերպ՝

«1. Մարդուն առևանգելը՝ անծին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ վայր տեղափոխելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Մեջբերված մասը հերմենևտիկայի տեսանկյունից տեքստ է, քանի որ այն՝

1) առարկայացված է օբյեկտիվ իրականության մեջ (արտահայտված է տառերի, թվերի և կետադրական նշանների միջոցով),

2) ունի կոնկրետ սահմաններ (սկսվում է «1» թվով, միջակետով ու «Մարդուն» բառով և ավարտվում է «ժամկետով» բառով և վերջակետով),

3) բաղկացած է փոխկապակցված տարրերից (տառերից, որոնք, միմյանց հետ կապակցվելով ձևավորում են բառեր, իսկ վերջիններս բառակապակցություններ),

4) արտահայտում է հեղինակի (իրավաստեղծի) որոշակի միտք, որը կարող է ընկալվել ընթերցողի (մեկնաբանողի) կողմից:

Համատեքստը հերմենևտիկայում բնորոշվում է որպես տեքստը ներառող և ա-

¹ Տե՛ս **Бласс Ф.В.** Герменевтика и критика, 1891, էջ 7:

² Տե՛ս **Шлейермахер Ф.** Герменевтика: пер. с нем. СПб., Европейский дом, 2004, էջ 11:

վելի ընդլայնված սահմաններ ունեցող մեկ այլ տեքստ¹: Պարզ ասած՝ համատեքստը մի քանի տեքստերի ամբողջություն է: Համատեքստը չի կարող որպես այդպիսին դիտարկվել ինքնուրույն, առանց տեքստի: Համատեքստը կարող է որպես այդպիսին դիտարկվել միայն մեկ այլ տեքստի հետ հարաբերության մեջ: Այսպես, օրինակ, քր.օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված տեքստի համար որպես համատեքստ հանդես է գալիս ամբողջ 191-րդ հոդվածում ամրագրված տեքստը: Վերջինիս համար որպես համատեքստ հանդես է գալիս քր.օր.-ի 26-րդ գլխի («Ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները») տեքստը: Իր հերթին, քր.օր.-ի 26-րդ գլխի տեքստի համար համատեքստ է քր.օր.-ի 9-րդ բաժնի («Մարդու դեմ ուղղված հանցագործությունները») տեքստը:

Տեքստի իմաստը ճիշտ հասկանալու համար հերմենևտիկայում չափազանց կարևոր նշանակություն է տրվում համատեքստին: Հենց տեքստի և համատեքստի փոխազդեցության գաղափարի վրա է հիմնվում տեքստերի հերմենևտիկ հետազոտության հիմնական մեթոդի՝ հերմենևտիկ շրջանի կիրառումը: Այդ մեթոդի էությունը հետևյալն է. ամբողջ տեքստը հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ դրա առանձին մասերը, բայց մյուս կողմից՝ տեքստի առանձին մասերը հասկանալու վրա ազդում է ամբողջ տեքստի իմաստի ընկալումը²:

Հերմենևտիկ շրջանի կիրառմամբ տեքստը մեկնաբանելու համար անհրաժեշտ է ամբողջից (համատեքստից) մտովի առանձնացնել մասը (տեքստը): Այսպես, մեկնաբանողը առաջին հերթին իր համար պետք է ուրվագծի մեկնաբանվող տեքստի արտաքին սահմանները և կենտրոնանա այդ սահմաններից ներս գտնվող բառերի և արտահայտությունների իմաստը հասկանալու վրա: Այն բանից հետո, երբ մեկնաբանողը ձևավորել է իր նախնական դիրքորոշումը՝ տեքստի իմաստի մասին, նա պետք է ստուգի այդ դիրքորոշումը՝ նայելով տեքստի՝ իր իսկ գծած սահմաններից դուրս, այսինքն՝ հաշվի առնի համատեքստը: Մեկնաբանողը պետք է պարզի, թե որքանով է տեքստի իր մեկնաբանությունը «տեղավորվում» համատեքստի մեջ, արդյոք չի հակասում համատեքստի մաս կազմող այլ տեքստերին:

Կրոնական, գրական, գեղարվեստական տեքստերը մեկնաբանելիս համատեքստի վրա հիմնվելն ունի ընդամենը ճանաչողական նշանակություն և թույլ է տալիս առավել խորությամբ հասկանալ տեքստի հեղինակի մտքերն ու գաղափարները: Սակայն նորմատիվ իրավական ակտի տեքստը մեկնաբանելիս համատեքստի վրա հիմնվելն ունի հատուկ կարևորություն և գործնական նշանակություն: Նորմատիվ իրավական ակտի տեքստը ստեղծվում է գործնական կիրառության՝ իրավաստեղծի կամքի իրագործման համար, սակայն վերջինս, կարգավորելով այս կամ այն հասարակական հարաբերությունը, ի վիճակի չէ իր նպատակը ձևակերպել ամբողջությամբ մեկուսացված և ինքնուրույն նորմի մեջ: Նա պետք է ստեղծի փոխկապակցված իրավական նորմերի և ինստիտուտների օրգանական ամբողջություն: Այդ պատճառով յուրաքանչյուր իրավական նորմ, առանձին վերցրած, բովանդակում է իրավաստեղծի նպատակի միայն մի մասը: Ուստի իրավական նորմի իմաստը կարող է ճիշտ ընկալվել ու հասկացվել միայն այն դեպքում, երբ այդ նորմը դիտարկվում է մյուս նորմերի հետ միասնաբար, որոնք իրար հետ կազմում են մեկ ամբողջություն և իրավաստեղծի կամքն արտահայտում են լրիվ ծավալով: Համատեքստից կտրված իրավական նորմը լիարժեք չէ, միայն դրա վրա հիմնվելով՝ հնարավոր չէ պարզել այդ նորմի իրական բովանդակությունը: Դիտարկելով, թե ինչպիսի «միջավայրում», նորմատիվ իրավական ակտի կոնկրետ որ մասում է գտնվում իրավական նորմը՝ մեկնաբանողը կարող է հետևություններ անել իրավա-

¹ Տե՛ս Шлейермахер Ф.Նշվ. աշխ., էջ 13:

² Տե՛ս Гермашев А.Н. К вопросу о методе юридической герменевтики // Общество и право, 2009, №4, էջ 26:

կան ինստիտուտների համակարգում այդ նորմի դերի մասին, պարզել այդ նորմի փոխազդեցությունը ինչպես մյուս առանձին նորմերի, այնպես էլ՝ ամբողջ նորմատիվ իրավական ակտի հետ:

Հերմենտիկայում ընդունված է տարբերակել մոտակա և հեռակա համատեքստերը¹: Նորմատիվ իրավական ակտի ամենափոքր միավորը, որը հերմենտիկ հետազոտության տեսանկյունից կարող է դիտարկվել որպես տեքստ, բառն է: Բառի համար որպես մոտակա համատեքստ հանդես է գալիս այն հոդվածը (հոդվածի մասը, կետը), որում գտնվում է այդ բառը, իսկ որպես հեռակա համատեքստ՝ այն գլուխը, որում գտնվում է տվյալ հոդվածը: Նմանապես՝ հոդվածի համար մոտակա համատեքստ է նորմատիվ իրավական ակտի գլուխը, հեռակա համատեքստ՝ բաժինը, իսկ առավել հեռակա համատեքստ՝ ամբողջ նորմատիվ իրավական ակտը:

Նորմատիվ իրավական ակտի նորմը ճիշտ մեկնաբանելու անհրաժեշտ նախապայմաններից մեկը մեկնաբանվող տեքստի ճիշտ սահմանագծումն է: Դրա համար անհրաժեշտ է նորմում հայտնաբերել այսպես կոչված «մութ կետը», այսինքն՝ այն բառը կամ արտահայտությունը, որը տվյալ կոնկրետ դեպքի փաստական հանգամանքների նկատմամբ նորմը կիրառելու տեսանկյունից թվում է անհասկանալի, անորոշ, երկիմաստ, հակասական: Ընդ որում, նույն իրավական նորմի տեքստում «մութ կետը» կարող է փոխվել՝ կախված կոնկրետ գործի փաստական հանգամանքներից: Օրինակ, քր.օր.-ի 207-րդ հոդվածի («Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը») 1-ին մասի դիսպոզիցիան շարադրված է հետևյալ կերպ. «Մարդու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով նրա բնակարանն ապօրինի մուտք գործելը»: Եթե մենք ցանկանում ենք պարզել, թե արդյոք նշված հոդվածով կարելի է որակել այն անձի արարքը, ով գիշերելու նպատակով բարձրացել և մտել է բազմաբնակարան շենքի առաջին հարկի բաց պատշգամբ, ապա «մութ կետը» «բնակարան» բառն է: Եթե մենք ցանկանում ենք պարզել, թե արդյոք նշված հոդվածով կարելի է որակել այն անձի արարքը, ով ուրիշի բնակարան է մուտք գործել այնտեղ բռնկված հրդեհը մարելու նպատակով, ապա «մութ կետը» կլինի «ապօրինի» բառը: Իսկ, օրինակ, եթե մենք ցանկանում ենք պարզել, թե արդյոք նշված հոդվածով կարելի է որակել այն անձի արարքը, ով բնակարանի սեփականատիրոջ վարձատուի թույլտվությամբ, բայց վարձակալի կամքին հակառակ մուտք է գործել բնակարան, ապա «մութ կետ» կդառնան «մարդու» և «նրա» բառերը:

Կարծում ենք, որ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանվող տեքստի «օպտիմալ» ծավալը պետք է սահմանափակվի մեկ բառով կամ արտահայտությամբ: Նույնիսկ նախադասությունը պետք չէ դիտարկել որպես մեկնաբանվող տեքստ, քանի որ, միևնույնն է, մեկնաբանողի ուշադրությունը վերջին հաշվով կենտրոնանալու է այդ նախադասության «խնդրահարույց» բառի կամ արտահայտության վրա, իսկ նախադասությունը վերջիններիս համար դառնալու է համատեքստ²: Մեկնաբանվող նորմում «մութ կետի» շրջանակների հնարավորինս նեղացումը թույլ է տալիս նաև կոնկրետ գործի փաստական հանգամանքների համակցության մեջ ա-

¹ St`u **Арафонова Т.П.** Рационалистическая интерпретация юридического текста и основы правовой герменевтики // Актуальные проблемы гуманитарных и естественных наук. 2011. № 9. էջեր 98-102:

² Իրավական նորմի տեքստում «մութ կետի» վրա կենտրոնանալը ամենին չի նշանակում, որ նորմի մյուս բառերն ու արտահայտությունները մեկնաբանման ենթակա չեն: Իրավական նորմը կիրառելիս իրավակիրառողը մեկնաբանում է նորմի տեքստի բոլոր բառերն ու արտահայտությունները: Այլ հարց է, որ որոշ բառերի և արտահայտությունների նշանակության պարզումը տվյալ կոնկրետ դեպքում ավելի հեշտ է, քան «մութ կետի» իմաստի բացահայտումը: Եթե մեկնաբանողը որոշել է «մութ կետի» սահմանները, ապա դա նշանակում է, որ նա արդեն իսկ մեկնաբանել է մյուս բառերն ու արտահայտությունները՝ արձանագրելով, որ դրանց իմաստը պարզ է իր համար:

ռանձնացնել «մութ կետի» հետ «թղթակցող» կոնկրետ փաստական հանգամանքը և ձևակերպել փաստի և իրավունքի համապատասխանության վերաբերյալ հնարավորինս կոնկրետ և հստակ հարցադրում: Օրինակ՝ «արդյո՞ք Ա-ի արարքը կարող է որակվել որպես բնակարանի անձեռնմխելիության խախտում» հարցադրումը բավականին անորոշ է, իսկ «արդյո՞ք պատշգամբը, որից անարգել մուտք է առկա բնակության համար օգտագործվող շինություն, կարող է համարվել բնակարան» հարցադրումն արդեն ավելի կոնկրետ է:

Եթե մեկնաբանողը փորձի միանգամից պարզել գործի փաստական հանգամանքների ամբողջ համակցության նկատմամբ մի ամբողջ իրավական ինստիտուտի կիրառելիության հնարավորությունը, ապա նա չի կարողանա բացահայտել իրավաստեղծի իրական կամքը: Դրան կարելի է հասնել միայն հնարավորինս կոնկրետացված հարցադրումներ ձևակերպելու և դրանց հաջորդաբար պատասխանելու միջոցով:

Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանելիս որպես ելակետ կարելի է ընդունել ինչպես «մութ կետի» մոտակա համատեքստը, այնպես էլ՝ հեռակա համատեքստերը: Դա բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի բովանդակությունից, որտեղ նշված է հոդվածի, գլխի և բաժնի կարգավորման համատեքստի մասին:

Ստորև կներկայացնենք մոտակա և հեռակա համատեքստերի հիման վրա կոնկրետ քրեաիրավական նորմերի մեկնաբանման օրինակներ:

Մոտակա համատեքստի վրա հիմնվելը արդյունավետ է, եթե իրավական նորմը բովանդակում է կոնկրետ պայմանների, հատկանիշների, հանգամանքների այնպիսի թվարկում, որը եզրափակվում է գնահատողական հասկացությամբ: Օրինակ՝ քր.օր.-ի 46-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է դրդիչի հետևյալ բնորոշումը. «Դրդիչ է համարվում այն անձը, որը մեկ ուրիշին դրդել է հանցանք կատարելու՝ համոզելու, նյութապես շահագրգռելու, սպառնալիքի միջոցով կամ այլ եղանակով»: Տվյալ դեպքում օրենսդիրը թվարկել է դրդչության երեք կոնկրետ եղանակներ (համոզելը, նյութապես շահագրգռելը և սպառնալիքը) և թվարկումը եզրափակել է «կամ այլ եղանակով» արտահայտությամբ: Հարց է ծագում՝ կարող է արդյոք որպես դրդչության «այլ եղանակ» դիտարկվել վերադասի կողմից ստորադասին կոնկրետ հանցանք կատարելու հանձնարարություն տալը կամ անձի մոտ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների մասին պատմելն ու քրեական ենթամշակույթի մասին դրական վերաբերմունք ձևավորելը, եթե դրա ազդեցությամբ անձը հանցանք է կատարում: Նշված երկու օրինակների դեպքում «մութ կետ» է «այլ եղանակ» արտահայտությունը: Այդ արտահայտությունը մեկնաբանելիս մոտակա համատեքստը որպես ելակետ ընդունելով՝ կարող ենք փաստել, որ «այլ եղանակ»-ը պետք է իր բնույթով համարժեք լինի հոդվածում թվարկված մյուս եղանակներին՝ համոզելուն, նյութապես շահագրգռելուն և սպառնալիքին, այսինքն՝ ունենա այն բոլոր հատկանիշները, որոնք ընդհանուր են նշված եղանակների համար: Իսկ նշված եղանակներն ունեն հետևյալ ընդհանուր հատկանիշները՝

1. դրանք կատարողի կամքի և գիտակցության վրա ներգործության գծեր են,
2. դրանք ունեն նպատակային ուղղվածություն, այն է՝ կատարողի մոտ առաջացնել կոնկրետ հանցանք կատարելու ցանկություն,
3. դրանք չպետք է կատարողի համար առաջացնեն ծայրահեղ անհրաժեշտության վիճակ:

Վերոնշյալ երկու օրինակները դիտարկելով դրդչության եղանակների ընդհանուր հատկանիշների լույսի ներքո՝ կարող ենք փաստել, որ վերադասի կողմից ստորադասին կոնկրետ հանցանք կատարելու հանձնարարություն տալը կարող է գնահատվել որպես դրդչության այլ եղանակ, քանի որ համապատասխանում է նշված երեք հատկանիշներին: Իսկ անձի մոտ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների մասին պատմելն ու քրեական ենթամշակույթի մասին դրական

վերաբերմունք ձևավորելը չեն կարող գնահատվել որպես դրչդության այլ եղանակ, քանի որ դա նպատակաուղղված չէ կատարողի մոտ կոնկրետ հանցանքի կատարման ցանկություն առաջացնելուն:

Իրավական նորմը մեկնաբանելիս մոտակա համատեքստի վրա հիմնվելու օրինակ կարող է ծառայել նաև Պարույր Բայրամյանի գործի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումը: Վերջինս սահմանել է այն երեք չափանիշները, որոնք բնորոշ են քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներին և արձանագրել է, որ նշված չափանիշներին պետք է համապատասխանեն նաև այն հանգամանքները, որոնք քրեական օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված չեն որպես մեղմացնող, բայց դատարանի կողմից հաշվի են առնվում որպես այդպիսիք¹:

Իրավական նորմը մեկնաբանելիս մոտակա համատեքստի վրա հիմնվելու անհրաժեշտության մասին է նշված նաև քր.օր.-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում ամրագրված դեֆինիտիվ նորմում, որի համաձայն «այլ ծանր հետևանք կամ այլ էական վնաս» հասկացությունը բնորոշվել է որպես «սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածում, հոդվածի մասում կամ կետում թվարկված հետևանքներին համարժեք կամ համաբնույթ վտանգավորություն ներկայացնող հանգամանք»:

Իրավական նորմը մեկնաբանելիս որպես մոտակա համատեքստ կարող է դիտարկվել ոչ միայն հոդվածի մասը (կետը), այլև ամբողջ հոդվածը: Այսպես, քր.օր.-ի 250-րդ հոդվածի («Ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելը կամ հարկադրելը») 1-ին մասի դիսպոզիցիան շարադրված է հետևյալ կերպ. «Հորդորելու, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ այլ եղանակով անձին ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելը կամ հարկադրելը»: Հարց է ծագում կարող է արդյոք բռնության գործադրումը գնահատվել որպես անձին ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելու կամ հարկադրելու այլ եղանակ և հիմք ծառայել հանցավորի արարքը քր.օր.-ի 250-րդ հոդվածի 1-ին մասով որակելու համար:

Եթե մեկնաբանողը սահմանափակվի միայն քր.օր.-ի 250-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներով, նա այդ հարցին կտա դրական պատասխան, քանի որ բռնության գործադրումն ունի այն հատկանիշները, որոնք բնորոշ են տվյալ դիսպոզիցիայում թվարկված կոնկրետ եղանակներին. այն նույնպես ներգործություն է տուժողի կամքի և գիտակցության վրա, որի նպատակն է վերջինիս մեջ առաջացնել ծնողական իրավունքներից հրաժարվելու ցանկություն: Սակայն այդ պատասխանը սխալ է, քանի որ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում բռնության գործադրումը նախատեսված է որպես քննարկվող հանցանքի ծանրացնող հանգամանք: Հետևաբար՝ ամբողջ հոդվածի համատեքստի վրա հիմնվելով՝ կարող ենք պնդել, որ հոդվածի 1-ին մասում նշված «այլ եղանակով» արտահայտությունը չի ներառում բռնության գործադրումը:

Ինչպես արդեն նշել ենք, իրավական նորմը մեկնաբանելիս իրավակիրառողը կարող է հենվել նաև մեկնաբանվող նորմի հեռակա համատեքստի՝ նորմատիվ իրավական ակտի այն գլխի կամ բաժնի վրա, որում գտնվում է տվյալ նորմը:

Իրավական նորմի հեռակա համատեքստի վրա հիմնվելու թույլատրելիությունը և անհրաժեշտությունը պայմանավորված են այն բանով, որ իրավաբանական տեքստերի մեկնաբանման հնարքները դիալեկտիկական կապի մեջ են իրավաս-

¹ Նշված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը կիրառել է «ejusdem generis» իրավամեկնաբանման հնարքը: Առավել մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը ՎԲ-84/07 գործի վերաբերյալ:

տեղծման կանոնների հետ: Մասնագիտական գրականության մեջ նույնիսկ կարծիք է արտահայտվել այն մասին, որ օրենսդրական տեխնիկայի կանոնները մտնում են իրավաբանական հերմենևտիկայի ուսումնասիրության առարկայի մեջ¹:

Մեկնաբանման հնարքների և օրենսդրական տեխնիկայի կանոնների կապն արտահայտվում է հետևյալում: Օրենսդրական տեխնիկան պահանջում է, որ նորմատիվ իրավական ակտը ունենա տրամաբանական կուռ կառուցվածք, լինի անհակասական, կազմի փոխկապակցված տարրերի ամբողջություն: Իսկ մեկնաբանողը որպես կանոն պետք է առաջնորդվի այն կանխավարկածով, որ տվյալ նորմատիվ իրավական ակտը ստեղծվել է օրենսդրական տեխնիկայի վերոնշյալ պահանջի պահպանմամբ, ուստի այդ նորմատիվ իրավական ակտի մասերը (բաժինները, գլուխները, հոդվածները) կրում են բովանդակային միասնության դրոշմը:

Այսպես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված են նորմատիվ իրավական ակտի համակարգային կառուցվածքն ապահովող մի շարք պահանջներ: Օրինակ՝ նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները (օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մաս), ընդհանուր և հատուկ մասերում ընդգրկվում են օրենսդրական ակտի բովանդակությամբ համասեռ գլուխները, բաժինները (օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մաս), օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում (օրենքի 14-րդ հոդվածի 4-ին մաս), հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը (օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մաս), բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը (օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մաս):

Այս կամ այն հոդվածի տեքստը մեկնաբանելիս մեկնաբանողը կարող է հենվել տվյալ հոդվածը բովանդակող գլխի կամ բաժնի ընդհանուր բովանդակության և վերնագրի վրա և պարզել՝ արդյոք տվյալ տեքստի այս կամ այն մեկնաբանությունը համահունչ և ներդաշնակ է հեռակա համատեքստի հետ: Ինչպես իրավագիտորեն նշվել է մասնագիտական գրականության մեջ, օրենսդիրը իրավական նորմերը բաշխում է օրենքի առանձին բաժիններում և վերնագրում է այդ բաժինները ոչ միայն այն նպատակով, որ իրավակիրառողը հեշտ գտնի նորմը, այլև որպեսզի իրավակիրառողին մատնանշի, թե հասարականան հարաբերությունների հատկապես որ խմբի նկատմամբ է հնարավոր կիրառել այդ նորմը²:

Ինչպես արդեն նշել ենք, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր, որ իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար: Սակայն նույն օրենքը սահմանում էր, որ իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի դրա բովանդակությանը (40-րդ հոդվածի 1-ին մաս): Նմանատիպ պահանջ էր սահմանված նաև իրավական ակտի բաժինների, գլուխների և հոդվածների վերնագրերի համար (41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Կարծում ենք, որ մեջբերված դրույթների միջև առկա էր որոշակի հակասություն: Այսպես, ստացվում էր, որ իրավական ակտի գլխի մեկնաբանման համար չէր կարող օգտագործվել այդ գլխի վերնագիրը, որը նույն օրենքի պահանջով պետք է համապատասխաներ այդ գլխի բովանդակությանը: Ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ «Իրավական ակտերի մասին» օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրեն-

¹ Տե՛ս **Атарщикова Е. Н.** Герменевтика в праве : историко-правовой анализ, - М., 2003. էջ 287:

² Տե՛ս **Васьковский Е.В.** Руководство к толкованию и применению законов для начинающих юристов. М., 1913, էջ 42:

քում այլևս չնախատեսելը հիմնավորված է, և նորմատիվ իրավական ակտի հողվածի, գլխի և բաժնի վերնագրի օգտագործումը դրանց մեկնաբանման համար ոչ միայն թույլատրելի է, այլև անհրաժեշտ:

Ներկայացնենք քրեաիրավական նորմը մեկնաբանելիս հեռակա համատեքստը որպես ելակետ ընդունելու կոնկրետ օրինակ: Վերջին ժամանակաշրջանում լայն տարածում էին ստացել տրանսպորտային միջոցների համարանիշները գաղտնի հափշտակելու և դրանք վերադարձնելու դիմաց տրանսպորտային միջոցի սեփականատիրոջից գումար պահանջելու դեպքերը: Հարց է ծագում կարող է արդյոք տրանսպորտային միջոցի համարանիշի գաղտնի հափշտակությունը որակվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով որպես գողություն: Տվյալ դեպքում մեկնաբանման ենթակա «մութ կետը» նշված հոդվածի 5-րդ մասում նշված «ուրիշի գույք» արտահայտությունն է, իսկ մեկնաբանողի կողմից ձևակերպվող կոնկրետ հարցը հետևյալն է՝ կարո՞ղ է արդյոք տրանսպորտային միջոցի համարանիշը գնահատվել որպես ուրիշի գույք:

Եթե սահմանափակվենք միայն քր.օր.-ի 177-րդ հոդվածի շրջանակներով, ապա առաջին հայացքից այդ հարցին կարելի է տալ դրական պատասխան, քանի որ համարանիշն ունի գույքին բնորոշ ֆիզիկական հատկանիշներ (ձև, չափ, կշիռ և այլն), տրանսպորտային միջոցի սեփականատերը ժամանակին վճարել է դրա համար, և այդ համարանիշը չի պատկանում հափշտակողին: Սակայն «ուրիշի գույք» արտահայտությունը մեկնաբանելիս անհրաժեշտ է «նայել» նաև քր.օր.-ի 177-րդ հոդվածի շրջանակներից դուրս և հիմնվել այդ արտահայտության հեռակա համատեքստի վրա: Որպես այդպիսին տվյալ դեպքում հանդես է գալիս քր.օր.-ի 21-րդ գլուխը, որը վերնագրված է «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ»: Քր.օր.-ի 21-րդ գլխի վերնագրից և դրա ամբողջական բովանդակությունից բխում է, որ նշված գլխով նախատեսված բոլոր հանցանքների տեսակային օբյեկտ են համարվում սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Դա հիմք է տալիս պնդելու, որ նշված գլխով նախատեսված հանցագործությունների առարկա համարվող գույքը պետք է հանդիսանա տուժողի սեփականությունը:

Սինչդեռ տրանսպորտային միջոցի համարանիշը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ սեփականությունը չէ: Այսպես, ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման 12-րդ հավելվածի («Տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման և հատկացման կարգ») 10-րդ կետի բովանդակությունից բխում է, որ համարանիշները հատկացվում են ոչ թե տրանսպորտային միջոցների սեփականատերերին, այլ հենց տրանսպորտային միջոցներին: Բացի այդ, համարանիշը ստանալու համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կողմից կատարվող վճարումը ոչ թե համարանիշի գնում է, այլ՝ պետական տուրքի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե լրացուցիչ հաստատագրված գումարի վճարում¹: Տրանսպորտային միջոցի սեփականատերը չի կարող ազատորեն տնօրինել իր տրանսպորտային միջոցին հատկացված համարանիշը, վաճառել կամ նվիրել այն երրորդ անձանց²:

Իրականում տրանսպորտային միջոցի համարանիշի հափշտակությունը վնաս է պատճառում ոչ թե տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ սեփականությանը, այլ պետության կողմից տրանսպորտային միջոցների հաշվառման, հատկաց-

¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման 12-րդ հավելվածի 11-րդ և 23-րդ կետեր:

² ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման 12-րդ հավելվածի 31-ից 34-րդ կետերը նախատեսում են միայն մեծ պահանջարկ ունեցող համարանիշներն օգտագործելու իրավունքը սահմանափակ շրջանակի անձանց փոխանցելու և վերահաշվառելու հնարավորություն, այն էլ՝ հատուկ ընթացակարգի պահպանմամբ:

ման, դրանց միջոցով տրանսպորտային միջոցը նույնականացնելու, տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ իրավահարաբերությունների մեջ մտնելու կապակցությամբ ծագող հասարակական հարաբերություններին: Իսկ նշված հարաբերությունները կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտ են:

Հետևաբար՝ տրանսպորտային միջոցի համարանիշի հափշտակության համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմը չի կարող «տեղավորվել» սեփականության դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող գլխի համատեքստում: Այդպիսի նորմ անհրաժեշտ է փնտրել քր.օր.-ի 30-րդ գլխում («Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ»): Սակայն նշված գլխով քրեական պատասխանատվություն է սահմանված միայն տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի կեղծման և իրացման համար, իսկ դրա հափշտակությունը քրեականացված չէ¹: Այսպիսով, քր.օր.-ի 177-րդ հոդվածի հեռակա համատեքստի վրա հիմնվելով՝ մենք հանգեցինք հետևության, որ տրանսպորտային միջոցի համարանիշի գաղտնի հափշտակությունը չի կարող որակվել որպես գողություն:

Ամփոփելով շարադրանքը՝ ցանկանում ենք ընդգծել, որ իրավական նորմը մեկնաբանելու առաջին ելակետը միշտ պետք է լինի տեքստի նշանակությունը: Պատահական չէ, որ բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածում նշված է որպես իրավական նորմի մեկնաբանման առաջին նախադրյալ: Միայն դրանից հետո մեկնաբանողը պետք է կիրառի համատեքստի վրա հիմնվելու եղանակը: Ընդ որում, կարծում ենք, որ մեկնաբանողը համատեքստին պետք է դիմի ինչպես այն դեպքում, երբ բառերի և արտահայտությունների տառացի նշանակության հիման վրա նա պարզեց տեքստի իմաստը, այնպես էլ այն դեպքում, երբ բառերի և արտահայտությունների տառացի նշանակության վրա հիմնվելը արդյունք չտվեց, և տեքստի իմաստի վերաբերյալ մնացին տարակարծություններ: Առաջին դեպքում համատեքստը հանդես կգա որպես տեքստին տրված մեկնաբանությունը հիմնավորող լրացուցիչ փաստարկ, իսկ երկրորդ դեպքում՝ որպես տեքստի մեկնաբանությունների կոնֆլիկտը լուծելու միջոց: Այսպես, իրավաբանական հերմենևտիկայի մշակած կանոններից մեկն այն է, որ մեկնաբանությունների կոնֆլիկտի դեպքում պետք է ընտրել տեքստի այն մեկնաբանությունը, որն ավելի ներդաշնակ է համատեքստի բովանդակությանը²:

Այսպիսով, իրավական նորմի մեկնաբանումը կարող է հիմնավոր և համոզիչ լինել միայն այն դեպքում, երբ մեկնաբանողը իրավաստեղծի կամքը բացահայտելու համար ոչ միայն դիտարկի տեքստի տառացի նշանակությունը և համատեքստը, այլև կիրառի իրավաբանական հերմենևտիկային հայտնի մեկնաբանման հնարքների ու եղանակների հնարավորինս լայն գործիքակազմ:

¹ Այդ բացը լրացվել է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված քր.օր.-ում, որի 456-րդ հոդվածով քրեականացվել է նաև տրանսպորտային միջոցի պետհամարանիշը հափշտակելը, շորթելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը:

² Տե՛ս **Малинова И.П.** Философия права и юридическая герменевтика. Москва. Изд. Норма, 2019, էջ 92:

КОНТЕКСТ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ КАК ОСНОВАНИЕ ТОЛКОВАНИЯ ПРАВОВОЙ НОРМЫ (НА ПРИМЕРЕ ТОЛКОВАНИЯ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ)

Мисак Маркосян

*Первый заместитель начальника Образовательного комплекса полиции
Республики Армения, кандидат юридических наук, доцент*

Нормативно-правовые акты содержат специальную терминологию, которая часто понимается неоднозначно, оценочные понятия, требующие уточнения относительно конкретного случая, двусмысленные слова и выражения, являющиеся следствием неправильного применения правил законодательной техники. Кроме того, правовые нормы взаимосвязаны, применяются системно, что требует необходимости выявления содержательно-логических связей между применяемыми нормами. Все это обуславливает необходимость толкования права.

Статья посвящена изучению одного из оснований толкования правовой нормы - контекста правового регулирования. Автор раскрывает содержание таких общих понятий герменевтики, как текст, контекст, герменевтический круг.

В статье выявляются особенности толкования юридических текстов, рассматривается влияние контекста на понимание текста правовой нормы. Теоретические суждения сочетаются с конкретными примерами толкования уголовно-правовых норм.

CONTEXT OF LEGAL REGULATION AS BASIS FOR INTERPRETING LEGAL NORMS (ON THE EXAMPLE OF THE INTERPRETATION OF CRIMINAL-LEGAL NORMS)

Misak Markosyan

*The First Deputy Head of the Educational Complex of Police of
the Republic of Armenia, PhD of Law, Associate Professor*

Normative legal acts contain special terminology, which is often not understood univocally, evaluative concepts that require clarification in relation to a specific case, ambiguous or polysemous words and expressions that are the result of incorrect implementation of the rules of legislative technics. In addition, legal norms are interconnected, applied systematically, which require the need to identify content-logical connections between applicable norms. All these factors determine the necessity to interpret the Law.

The article is devoted to the study of one of the bases of interpretation of legal norm-the context of legal regulation. The author reveals the content of general concepts of hermeneutics, such as text, context, hermeneutic circle. The article reveals the peculiarities of the interpretation of legal texts, studies the influence of the context on understanding text of a legal norm. Theoretical analyses are combined with specific examples of the interpretation of criminal-legal norms.

Բանալի բառեր - *իրավունքի մեկնաբանում, տեքստ, համատեքստ, իրավաբանական հերմենևտիկա, հերմենևտիկ շրջան, նորմատիվ իրավական ակտ, քրեաիրավական նորմ*

Ключевые слова: *толкование права, текст, контекст, юридическая герменевтика, герменевтический круг, нормативно-правовой акт, уголовно-правовая норма*

Key words: *interpretation of law, text, context, legal hermeneutics, hermeneutic circle, normative legal act, criminal legal norm*